ՀՀԿ

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

31 մարտ, 2026 թվականի № 30-Լ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԲՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 4-րդ և 5-րդ մասերով, 26-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 27-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետով, 28-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով, «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 67-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետով, Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի 2012 թվականի դեկտեմբերի 26-ի N 61-Լ որոշմամբ հաստատված «Հանրային հեռուստառադիոընկերության ֆինանսական միջոցների օգտագործման կարգի 21-րդ կետով, «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ «Ընկերություն») կանոնադրությամբ, հիմք ընդունելով Ընկերության գործադիր տնօրենի 2026 թվականի մարտի 30-ի N-ՀՄ-02/144/26 գրությունը և հաշվի առնելով Ընկերության 2025 թվականի ֆինանսատնտեսական գործունեության արդյունքներով տարեկան համախմբված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտորական կազմակերպության և Հանրային հեռարձակողի խորհրդի ներքին աուդիտի բաժնի եզրակացությունները՝ Հանրային հեռարձակողի խորհուրդը ո ր ո շ ու մ է.

1. Հաստատել Ընկերության 2025 թվականի ֆինանսատնտեսական գործունեության արդյունքներով համախմբված ֆինանսական հաշվետվությունները (2025 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն, 2025 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվություն, սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն, դրամական հոսքերի մասին համախմբված հաշվետվություն և համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ)՝ համաձայն սույն որոշման № 1 հավելվածի:

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Վ. ԴԱՐԲԻՆՅԱՆ

31 մարտ, 2026 թվականի

ք. Երևան